ԵԴ1/1316/01/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

29 հունվարի 2025 թվական քաղաք Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ԵԴ1/1316/01/23 քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2025 թվականի հունվարի 13-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2023 թվականի սեպտեմբերի 12-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում ստացվել է Գրիգոր Խաչատուրի Մուրադյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 44-255-րդ հոդվածի 2-րդ

մասի 2-րդ կետով, 17 դրվագ 255-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 254-րդ հոդվածի 1-ին մասով, 255-րդ հոդվածի 1-ին մասով և 254-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 4-րդ կետերով թիվ 49174921 (ԵԴ1/1316/01/23) քրեական վարույթը:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2023 թվականի սեպտեմբերի 15-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/1316/01/23 քրեական գործի վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի դեկտեմբերի 20-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ԵԴ1/1316/01/23 քրեական վարույթն ըստ ընդդատության Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին:

3. Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի հունվարի 13-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/1316/01/23 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի հունվարի 23-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. 2024 թվականի օգոստոսի 24-ի որոշմամբ Գրիգոր Խաչատուրի Մուրադյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 44-255-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 17 դրվագ 255-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 254-րդ հոդվածի 1-ին մասով, 255-րդ հոդվածի 1-ին մասով և 254-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 4-րդ կետերով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«նա, խարդախությամբ՝ խաբեության եղանակով, ուրիշի գույքի խոշոր չափերով հափշտակություն կատարելու դիտավորությամբ համացանցի www.list.am կայքում ծանոթանալով Երևան քաղաքի բնակիչ Կարեն Նորիկի Մարգարյանին պատկանող «Opel Astra մակնիշի 36 NA 207 հաշվառման համարանիշի ավտոմեքենան օրավարձով*

տրամադրելու վերաբերյալ հայտարարությանը, 2020 թվականի հուլիսի 7-ին Երևան քաղաքի Արշակունյաց պողոտայի 30-րդ շենքի բակային հատվածում հանդիպել է վերջինիս հետ և իրականում գոյություն չունեցող կեղծ տվյալներ հաղորդելով նրան այն մասին, որ Ջերմուկ քաղաքում աշխատում է որպես խմորեղենի առաքիչ, բանավոր պայմանավորվածություն է ձեռք բերել նրա հետ նշված ավտոմեքենան օրավարձով վերցնելու մասին: Վերցնելով նշված ավտոմեքենան՝ 2020 թվականի հուլիսի 8-ին այն վաճառել է Ջերմուկ քաղաքի բնակիչ Արսեն Վանիկի Հունանյանին՝ վերջինիս պատկանող «Range Rover» մակնիշի 34 ZQ 870 հաշվառման համարանիշի 1.100.000 ՀՀ դրամ արժեքով ավտոմեքենայի հետ փոխանակելու եղանակով, ինչի արդյունքում Կարեն Նորիկի Մարգարյանին պատճառվել է խոշոր չափի՝ 1.300.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

(…)

Բացի այդ, Գրիգոր Խաչատուրի Մուրադյանը, համացանցի www.list.am կայքում ծանոթանալով Ջերմուկի բնակիչ Արսեն Վանիկի Հունանյանին պատկանող «Range Rover» մակնիշի 34 ZQ 870 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վաճառքի վերաբերյալ հայտարարությանը, խարդախությամբ՝ խաբեության եղանակով, ուրիշի գույքի խոշոր չափերով հափշտակություն կատարելու դիտավորությամբ Կարեն Մարգարյանից օրավարձով վերցված «Opel Astra» մակնիշի 36 NA 207 հաշվառման համարանիշի ավտոմեքենան որպես միջոց օգտագործելով, 2020 թվականի հուլիսի 8-ին՝ ժամը 17:30-ի սահմաններում Ջերմուկ քաղաքի Զախատինյակ փողոցի 9-րդ շենքի բակում հանդիպել է Արսեն Հունանյանին և դիտավորությամբ իրականությունը խեղաթյուրելով՝ ներկայանալով «Opel Astra» մակնիշի 36 NA 207 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի սեփականատեր Կարեն Մարգարյան, առաջարկել է «Opel Astra» մակնիշի 36 NA 207 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի հետ փոխանակման եղանակով գնել Արսեն Հունանյանի «Range Rover մակնիշի 34 ZQ 870 հաշվառման համարանիշի ավտոմեքենան, ինչին վերջինս համաձայնել է: Արդյունքում, Գրիգոր Խաչատուրի Մուրադյանը ավտոմեքենաները հաջորդ օրը հաշվառելու կեղծ խոստմամբ Արսեն Հունանյանին է փոխանցել «Opel Astra» մակնիշի 36 NA 207 հաշվառման համարանիշի ավտոմեքենան և դրա հաշվառման վկայագիրը և վերցնելով ավտոմեքենան՝ հեռացել է, ինչի արդյունքում

Արսեն Հունանյանին պատճառվել է խոշոր չափի՝ 1.100.000 ՀՀ դրամի չափով գույքային վնաս:

(...)

Բացի այդ, Գրիգոր Խաչատուրի Մուրադյանը, խարդախությամբ՝ խաբեության եղանակով ուրիշի գույքի խոշոր չափերի հափշտակություն կատարելու դիտավորությամբ Արսեն Վանիկի Հունանյանին սեփականության իրավունքով պատկանող «Range Rover մակնիշի 34 ZQ 870 հաշվառման համարանիշի ավտոմեքենան որպես միջոց օգտագործելով, 2020 թվականի հուլիսի 11-ից 13-ն ընկած ժամանակահատվածում՝ քննությամբ չպարզված օրը, Երևան քաղաքի «Քանաքեռի ձոր» կոչվող տարածքում հանդիպելով Կոտայքի մարզի Առինջ գյուղի բնակիչ Արսեն Ռուբիկի Տոնոյանին, դիտավորությամբ իրականությունը խեղաթյուրելով, այն է՝ հիշյալ տրանսպորտային միջոցը ներկայացնելով որպես իր հարազատ եղբոր սեփականություն, Արսեն Ռուբիկի Տոնոյանի կողմից շահագործվող «Վազ 21099» մակնիշի 34 ZT 702 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի հետ փոխանակման եղանակով՝ մաս-մաս 1000 ԱՄՆ դոլար հավելավճար վճարելու պայմանով, պայմանավորվածություն է ձեռք բերել Արսեն Ռուբիկի Տոնոյանի հետ՝ Արսեն Վանիկի Հունանյանին սեփականության իրավունքով պատկանող՝ «Range Rover» մակնիշի 34 ZQ 870 հաշվառման համարանիշի ավտոմեքենան վերջինիս վաճառելու վերաբերյալ: Արսեն Ռուբիկի Տոնոյանը՝ Գրիգոր Խաչատուրի Մուրադյանին է վճարել 50.000 ՀՀ դրամ գումար՝ «Range Rover» մակնիշի 34 ZQ 870 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի շարժիչի և համակարգչի հետ կապված խնդիրները վերացնելու և հաջորդ օրը ավտոմեքենաները փոխանակելու համար: Հետագայում՝ քննությամբ չպարզված օրը, Արսեն Ռուբիկի Տոնոյանը ու Գրիգոր խաչատուրի Մուրադյանը հանդիպել են միևնույն վայրում և Գրիգոր Մուրադյանը ավտոմեքենայի շարժիչի և համակարգչի հետ կապված խնդիրները վերացրած չլինելու պայմաններում սակարկել է՝ պայմանավորված 1000 ԱՄՆ դոլար գումարը իջեցնելով 500 ԱՄՆ դոլարի չափով, որից հետո Գրիգոր Խաչատուրի Մուրադյանը, ավտոմեքենաները հետագայում հաշվառելու կեղծ խոստմամբ, Արսեն Ռուբիկի Տոնոյանին է հանձնել նշված ավտոմեքենան ու դրա՝ Արսեն Վանիկի Հունանյանի անվամբ սեփականության

իրավունքի վկայականը և վերցնելով «Վազ 21099» մակնիշի 34 ZT 702 հաշվառման համարանիշի ավտոմեքենան, հեռացել: 2020 թվականի հուլիսի 14-ին Գրիգոր Խաչատուրի Մուրադյանը զանգահարել է Արսեն Ռուբիկի Տոնոյանին և առաջարկել վճարել ևս 90.000 ՀՀ դրամ, իսկ պայմանավորված մնացած գումարը կրկին սակարկելով զրոյացրել է, ինչը կասկած է հարուցել Արսեն Ռուբիկի Տոնոյանի մոտ: Այդ պատճառով վերջինս ահազանգել է ոստիկանության Ջերմուկի բաժին և տեղեկացել, որ իր ավտոմեքենայի հետ փոխանակված «Range Rover» մակնիշի 34 ZQ 870 հաշվառման համարանիշի ավտոմեքենան Գրիգոր Խաչատուրի Մուրադյանը հափշտակել է Արսեն Հունանյանից: Այնուհետև, Արսեն Տոնոյանը պայմանավորվածություն է ձեռք բերել Գրիգոր Մուրադյանի հետ հանդիպել Երևան քաղաքի «Առինջ մոլ» առևտրի կենտրոնի մոտ՝ պայմանավորված 90.000 ՀՀ դրամ գումարը փոխանցելու համար: Հանդիպելով այնտեղ՝ մինչև ոստիկանության ծառայողների ժամանելը, Արսեն Տոնոյանն առաջարկել է Գրիգոր Մուրադյանին սպասել՝ պատճառաբանելով ընկերների կողմից նշված գումարը բերելու հանգամանքը, սակայն վերջինս, գումարային այլ հարցեր կարգավորելու կեղծ պատրվակով՝ կես ժամից վերադառնալու խոստմամբ, նշված վայրից նստել է քրեական գործով չպարզված «Օպել» մակնիշի տաքսի ավտոմեքենա և հեռացել՝ «Վազ 21099» մակնիշի 34 ZT 702 հաշվառման համարանիշի ավտոմեքենան թողնելով հանդիպման վայրում, որպիսի պայմաններում Գրիգոր Խաչատուրի Մուրադյանն իր կամքից անկախ հանգամանքներում՝ չի կարողացել ավարտին հասցնել հանցանքը ու Արսեն Տոնոյանից խարդախությամբ հափշտակել խոշոր չափերի՝ 800.000 ՀՀ դրամ արժողությամբ «Վազ 21099» մակնիշի 34 ZT 702 հաշվառման համարանիշի ավտոմեքենան:

(...)

Բացի այդ, Գրիգոր Խաչատուրի Մուրադյանը խարդախությամբ՝ վստահությունը չարաշահելու եղանակով, ուրիշի գույքի խոշոր չափի հափշտակություն կատարելու դիտավորությամբ համացանցի www.list.am կայքում ծանոթանալով Դավիթ Մացակի Դալլաքյանին պատկանող «Honda Step Wagon» մակնիշի, 35 RR 728 հ/հ ավտոմեքենայի վաճառքի վերաբերյալ հայտարարությանը, 2020 թվականի օգոստոսի 7-ին իր կողմից օգտագործվող 033-36-86-66

հեռախոսահամարով զանգահարել է Դավիթ Մացակի Դալլաքյանի 044-77-58-48 հեռախոսահամարին ու ցանկություն հայտնել գնել նշված ավտոմեքենան: Ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ նույն օրը՝ ժամը 14-ի սահմաններում, Գրիգոր Խաչատուրի Մուրադյանը այցելելով Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում գտնվող Դավիթ Մացակի Դալլաքյանի տուն, պայմանավորվածություն է ձեռք բերել նրա հետ գնել նշված ավտոմեքենան 2.900.000 ՀՀ դրամին համարժեք 6000 ԱՄՆ դոլար գումարով տարաժամկետ վճարման պայմանով, գումարի մի մասը՝ 3000 ԱՄՆ դոլարը, 2020 թվականի օգոստոսի 11-ին, իսկ մյուս մասը՝ նոտարական կարգով առուվաճառք ձևակերպելուց հետո վճարելու պայմանով, սակայն չարաշահելով Դավիթ Մացակի Դալլաքյանի վստահությունը, այն է՝ ավտոմեքենայի գումարը ժամանակին վճարելու կեղծ խոստմամբ նրան մոլորության մեջ գցելով, չի վճարել այն և հափշտակել է հիշյալ ավտոմեքենան՝ Դավիթ Մացակի Դալլաքյանին պատճառելով խոշոր չափի՝ ընդհանուր 2.900.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

(...)

Բացի այդ՝ Գրիգոր Խաչատուրի Մուրադյանը, խարդախությամբ՝ խաբեության եղանակով, ուրիշի գույքի խոշոր չափերով հափշտակություն կատարելու դիտավորությամբ համացանցի www.list.am կայքում ծանոթանալով Հրաչյա Հովհաննեսի Հակոբյանին պատկանող «Վազ 21214-126-20» մակնիշի, 36 PZ 263 հ/հ ավտոմեքենայի վաճառքի կամ փոխանակման վերաբերյալ հայտարարությանը, 2020 թվականի օգոստոսի 10-ին իր կողմից օգտագործվող 033-36-86-66 հեռախոսահամարով զանգահարել է Հրաչյա Հովհաննեսի Հակոբյանի 093-83-19-24 հեռախոսահամարին և դիտավորությամբ՝ իրականությունը խեղաթյուրելով ներկայացել որպես Դավիթ Մացակի Դալլաքյան՝ ցանկություն հայտնելով իր կողմից՝ 5000 ԱՄՆ դոլար գնահատվող «Honda Step Wagon» մակնիշի, 35 RR 728 հ/հ համարանիշի ավտոմեքենան փոխանակել Հրաչյա Հովհաննեսի Հակոբյանին պատկանող 480.000 ՀՀ դրամ արժողությամբ «Վազ 21214» մակնիշի, 36 PZ 263 հ/հ ավտոմեքենայի հետ՝ վերջինիս կողմից 1000 ԱՄՆ դոլարի չափով հավելավճար վճարելու պայմանով: Այնուհետև, ավտոմեքենան տեսնելու համար Գրիգոր Մուրադյանը Երևան քաղաքում հանդիպել է Հրաչյա Հակոբյանի որդուն՝ Արամ Հակոբյանին, ուսումնասիրել նրա մոտ գտնվող հիշյալ «Վազ 21214» մակնիշի, 36 PZ

263 հ/հ ավտոմեքենան ու այն «Honda Step Wagon» մակնիշի ավտոմեքենայի հետ փոխանակելու շուրջ համաձայնության գալու նպատակով գնացել Շիրակի մարզի Սարատակ գյուղում գտնվող Հրաչյա Հակոբյանի տուն: Այնտեղ պարզվել է, որ վերջինս զինված ուժերում ծառայել է Հրաչյա Հակոբյանի կրտսեր որդու՝ Արթուր Հակոբյանի հետ ու իր կողմից այլ՝ Դավիթ անվամբ ներկայանալու հանգամանքը պատճառաբանելով իբրև ՀՀ-ից դուրս գալու կապակցությամբ առաջացած խնդիրներով ու անվան փոփոխությամբ՝ Գրիգոր Մուրադյանը իրականում գոյություն չունեցող կեղծ տվյալներ հաղորդելով Հրաչյա Հակոբյանին վստահեցրել է, որ «Honda Step Wagon» մակնիշի ավտոմեքենան պատկանում է իրեն ու պայմանավորվել են, որ այն կփոխանակի Հրաչյա Հակոբյանի ավտոմեքենայի հետ վերջինիս կողմից 500 ԱՄՆ դոլար հավելավճար վճարելու պայմանով: Դրանից հետո նույն օրը՝ երեկոյան՝ գնալով Երևան-Աշտարակ մայրուղու Ագարակ գյուղին հարող հատված՝ փոխանակել են ավտոմեքենաները և Գրիգոր Խաչատուրի Մուրադյանը՝ հափշտակելով Հրաչյա Հովհաննեսի Հակոբյանի «Վազ 21214» մակնիշի, 36 PZ 263 հ/հ ավտոմեքենան, հեռացել է: Ապա հաջորդ օրն այդ մեքենայի շարժիչը գործի գցելու հետ կապված անսարքության նորոգման համար Հրաչյա Հակոբյանից պահանջել ու նույն օրը Երևան քաղաքում նրա որդուց՝ Արամ Հակոբյանից ստացել է 40.000 ՀՀ դրամ, ինչի արդյունքում խաբեությամբ հափշտակել ավտոմեքենան ու գումարը՝ Հ.Հակոբյանին պատճառելով խոշոր չափի՝ ընդհանուր՝ 520.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

(…)

Բացի այդ, Գրիգոր Խաչատուրի Մուրադյանը, 2020 թվականի հունվարի 29-ին 1 օր գիշերակացով ամրագրելով հյուրանոցային սենյակ Արմավիրի մարզի Մերձավան համայնքի Երևանյան խճուղի 26 հասցեում գտնվող «Զվարթնոց» հյուրանոցային համալիրում, գաղտնի հափշտակել է հյուրանոցային սենյակում գտնվող գույքը, այն է 10.000 ՀՀ դրամ արժողության թվով 2 սրբիչ, 10.000 դրամ արժողության անկողնային պարագաներ և 150.000 ՀՀ դրամ արժողության հեռուստացույց, որոնք տեղափոխելով իր կողմից շահագործվող «Նիսան Մարչ» մակնիշի, 21 RV 021 հաշվառման համարանիշի ավտոմեքենա, անմիջապես դուրս է բերել

հյուրանոցային համալիրի փարածքից «ՐԻՏԱՐՍ» ՍՊ ընկերությանը պատճառելով զգալի չափի՝ 170.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

(…)

Բացի այդ, Գրիգոր Խաչատուրի Մուրադյանը, խարդախությամբ՝ խաբեության եղանակով ուրիշի գույքի զգալի չափերի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, 2020 թվականի հուլիսի 27-ին՝ Երևան քաղաքի Տիգրան Մեծի պողոտայում Խաչիկ Հովակիմյանին պատկանող «Օպել Վեկտրա» մակնիշի, 22 CC 808 հաշվառման համարանիշի ավտոմեքենան վերջինիս կողմից իր տիրապետմանն ու օգտագործանը հանձնված լինելու պայմաններում Արագածոտնի մարզի Արտենի գյուղի Թումանյան փողոցի 16-րդ տան բնակիչ Դավիթ Դավթյանին իրականում գոյություն չունեցող կեղծ տվյալներ հաղորդելով այն մասին, որ նշված ավտոմեքենան սեփականության իրավունքով պատկանում է իրեն, հետագայում անվանափոխելու կեղծ պատրվակով, Դավիթ Դավթյանից խարդախությամբ՝ խաբեության եղանակով, հափշտակել է զգալի չափերի, ընդհանուր՝ 270.000 ՀՀ դրամ գումար և հեռացել:

(…)

Բացի այդ, Գրիգոր Խաչատուրի Մուրադյանը, խարդախությամբ՝ վստահությունը չարաշահելու եղանակով, ուրիշի գույքի խոշոր չափերի հափշտակություն կատարելու դիտավորությամբ՝ 2020 թվականի նոյեմբերի 06-ին Երևան քաղաքի Նուբարաշեն 11-րդ փողոցի 1-ին շենքի բակում օրական 5.000 ՀՀ դրամ վճարման պայմանով վարելու կեղծ պատրվակով Արշակ Արամայիսի Սեմիրջյանից վերցրել է վերջինիս սեփականության իրավունքով պատկանող «Մերսեդես-Բենց C 180» մակնիշի 36 UR 076 հաշվառման համարանիշի ավտոմեքենան և մինչև 2020 թվականի նոյեմբերի 26-ը ձեռք բերված գումարային պարտավորությունները պատշաճ կատարելու եղանակով Արշակ Արամայիսի Սեմիրջյանին դիտավորությամբ մոլորության մեջ գցելով, հափշտակել է նշված ավտոմեքենան՝ Արշակ Արամայիսի Սեմիրջյանին պատճառելով խոշոր չափերի՝ ընդհանուր 1.240.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

(…)

Բացի այդ, Գրիգոր Խաչատուրի Մուրադյանը խարդախությամբ՝ խաբեության եղանակով, ուրիշի գույքի խոշոր չափերի հափշտակություն կատարելու դիտավորությամբ 2020 թվականի դեկտեմբերի 03-ին Շիրակի մարզի Բավրա համայնքում գտնվող իր տանը հանդիպելով Ասատուր Սամվելի Հարությունյանին և դիտավորությամբ իրականությունը խեղաթյուրելով՝ ներկայանալով որպես «Մերսեդես-Բենց C 180» մակնիշի 34 UR 076 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի սեփականատեր Արշակ Սեմիրջյան, պայմանավորվածություն է ձեռք բերել վերջինիս հետ իրեն պատկանող «Opel Astra» մակնիշի 36 VT 694 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի հետ փոխանակման եղանակով 200.000 ՀՀ դրամի չափով հավելավճար վճարելու պայմանով վաճառել նշված ավտոմեքենան, ինչին վերջինս համաձայնել է: Նույն օրը վերցնելով 200.000 ՀՀ դրամ գումարը և «Opel Astra» մակնիշի 36 VT 694 հաշվառման համարանիշի ավտոմեքենան, հափշտակել է դրանք՝ Ասատուր Հարությունյանին պատճառելով խոշոր չափի, ընդհանուր՝ 950.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

(…)

Բացի այդ՝ Գրիգոր Խաչատուրի Մուրադյանը, խարդախությամբ՝ վատահությունը չարաշահելու եղանակով, ուրիշի գույքի խոշոր չափերով՝ հափշտակություն կատարելու դիտավորությամբ համացանցի www.list.am կայքում ծանոթանալով Արթուր Հրանտի Միրզոյանին պատկանող «Օպել Զաֆիրա» մակնիշի 36 VZ 387 հ/հ և «Մերսեդես» մակնիշի 36 VX 792 հ/հ ավտոմեքենաները օրավարձով տրամադրելու վերաբերյալ հայտարարությանը, զանգահարել է նրան և ցանկություն հայտնել 6000 ՀՀ դրամ օրավարձով վարձակալել «Օպել Զաֆիրա» մակնիշի ավտոմեքենան: Բանավոր համաձայնության գալով Գրիգոր Խաչատուրի Մուրադյանի հետ՝ Արթուր Հրանտի Միրզոյանը 2021 թվականի փետրվարի 2-ին Երևան քաղաքի Նազարբեկյան թաղամասի 4-րդ շենքի բակում Գրիգոր Մուրադյանին է հանձնել խոշոր չափի՝ 1.750.000 ՀՀ դրամ արժողությամբ «Օպել Զաֆիրա» մակնիշի 36 VZ 387 հ/հ ավտոմեքենան:

Գրիգոր Խաչատուրի Մուրադյանը, 10 օր պայմանավորված վճարումները պատշաճ կատարելու եղանակով Արթուր Հրանտի Միրզոյանի վստահությունն ամրապնդելով և դրանով իսկ նրան դիտավորությամբ մոլորության մեջ գցելով,

կրկին հանդիպել է նրան և ցանկություն է հայտնել 5.000 ՀՀ դրամ օրավարձով վարձակալել նաև նրան պատկանող «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենան: Կրկին ունեցած բանավոր համաձայնության հիման վրա՝ Արթուր Միրզոյանն Երևան քաղաքի Նազարբեկյան թաղամասի 4-րդ շենքի բակում իր խոշոր չափի՝ 1.500.000 ՀՀ դրամ արժողությամբ «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենան հանձնել է Գրիգոր Մուրադյանին, ինչի արդյունքում Գրիգոր Խաչատուրի Մուրադյանը խարդախությամբ հափշտակելով նշված ավտոմեքենաները՝ Արթուր Հրանտի Միրզոյանին՝ պատճառել է խոշոր չափի՝ ընդհանուր 3.250.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

(…)

Բացի այդ, Գրիգոր Խաչատուրի Մուրադյանը, գույքի պաշտպանության համար նախատեսված այլ միջոցի շրջանցմամբ գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, օգտվելով Գեղարքունիքի մարզի Չկալովկա գյուղի 2-րդ փողոց, տուն 38 հասցեում գտնվող, Սեյրան Սպարտակի Ղուկասյանին պատկանող առանձնատան ավտոտնակի դարպասները կողպված չլինելու հանգամանքից, 2020 թվականի հուլիսի 2-ին՝ ժամը 22:00-ից հուլիսի 3-ը՝ ժամը 06:30-ն ընկած ժամանակահատվածում ապօրինի մուտք է գործել ավտոտնակ և գաղտնի հափշտակել 1 հատ «РЕСАНТА» տեսակի զոդման սարք, 1 հատ «УРАЛ» տեսակի բենզասղոց, 1 հատ թուրքական արտադրության գեներատոր, 1 հատ 1800Վ հզորության կտրիչ, 1 հատ «ИНТЕРЦКОЛ» տեսակի 1200 հզորության էլեկտրական կտրիչ, 1 հատ «TOTAL» տեսակի և 1 հատ «KENZO» տեսակի շաղափ-պերֆերատորներ, տարբեր տեսակի և չափերի բանալիներ՝ Սեյրան Սպարտակի Ղուկասյանին պատճառելով խոշոր չափերի՝ ընդհանուր 600.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

(…)

Բացի այդ, Գրիգոր Խաչատուրի Մուրադյանը խարդախությամբ՝ խաբեության եղանակով, ուրիշի գույքի խոշոր չափերով հափշտակություն կատարելու դիտավորությամբ համացանցի www.list.am կայքում ծանոթանալով Տիգրան Նորայրի Հովհաննիսյանի կողմից տեղադրված՝ «SEAT IBIZA 141» մակնիշի 34 QZ 728 հաշվառման համարանիշի ավտոմեքենան օրավարձով տրամադրելու

վերաբերյալ հայտարարությանը, զանգահարել է վերջինիս և ցանկություն հայտնել օրավարձով վարձակալել նշված ավտոմեքենան: Տիգրան Հովհաննիսյանի և Գրիգոր Մուրադյանի միջև ձեռք բերված բանավոր պայմանավորվածության համաձայն՝ 2020 թվականի հունվար ամսին՝ քննությամբ չպարզված օրը, վերջիններս հանդիպել են Երևան քաղաքի Լենինգրադյան փողոցի 16-րդ շենքի բակում, որտեղ Տիգրան Նորայրի Հովհաննիսյանը «SEAT IBIZA 141 մակնիշի 34 QZ 728 հաշվառման համարանիշի ավտոմեքենան հանձնել է Գրիգոր Խաչատուրի Մուրադյանին՝ յուրաքանչյուր օրվա համար 4000 ՀՀ դրամ վարձավճար վճարելու պայմանով: Գրիգոր Մուրադյանն, իր իրական մտադրության մասին լռելով, համաձայնել է նշված պայմանին և վերցնելով հիշյալ ավտոմեքենան, հեռացել է՝ Տիգրան Նորայրի Հովհաննիսյանին պատճառելով խոշոր չափերի՝ ընդհանուր 1.500.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

(...)

Բացի այդ, Գրիգոր Խաչատուրի Մուրադյանը, խարդախությամբ՝ խաբեության եղանակով, ուրիշի գույքի խոշոր չափերով հափշտակություն կատարելու դիտավորությամբ համացանցի www.list.am կայքում ծանոթանալով Երևան քաղաքի բնակչուհի Արմինե Կառլենի Դավթյանին պատկանող «Iphone XS MAX» մոդելի բջջային հեռախոսը վաճառելու վերաբերյալ հայտարարությանը, 2021 թվականի հունիսի 15-ին Երևան քաղաքում հանդիպել է Արմինե Դավթյանի որդի Յուրիկ Գագիկի Հարությունյանին և իրականում գոյություն չունեցող կեղծ փվյալներ հաղորդելու միջոցով նրան ներկայացել որպես իր տիրապետման և օգտագործման ներքո գտնվող «Մազդա» մակնիշի 35 CP 158 հ/հ ավտոմեքենայի սեփականատեր՝ Նարեկ անվամբ: Նույն օրը՝ ժամը 12:20-ի սահմաններում, Գրիգոր Խաչատուրի Մուրադյանը նշված հեռախոսի գումարը ստանալու և Յուրիկ Գագիկի Հարությունյանին վճարելու կեղծ պատրվակով Երևան քաղաքի Աբովյան 35 հասցեի հարակից հատվածում Յուրիկ Գագիկի Հարությունյանից վերցրել է նշված բջջային հեռախոսը, նրան է տվել հիշյալ ավտոմեքենայի հաշվառման վկայագիրը և խնդրել մինչև իր վերադարձը՝ սպասել ավտոմեքենայի մեջ՝ հեռանալով նշված վայրից, ինչի արդյունքում Արմինե Կառլենի Դավթյանին պատճառվել է խոշոր չափի՝ 700.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

(…)

Բացի այդ, Գրիգոր Խաչատուրի Մուրադյանը, խարդախությամբ՝ խաբեության եղանակով, ուրիշի գույքի խոշոր չափերով հափշտակություն կատարելու դիտավորությամբ համացանցի www.list.am կայքում ծանոթանալով Սյունիքի մարզի Գորիս քաղաքի բնակիչ Նաիրի Նորայրի Ալեքսանյանին պատկանող «ԲՄՎ» մակնիշի 35 MN 012 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վաճառքի վերաբերյալ հայտարարությանը, 2021 թվականի մայիսի 8-ին՝ ժամը 23:00-ի սահմաններում, Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքի Երևանյան խճուղում հանդիպել է նրան և դիտավորությամբ իրականությունը խեղաթյուրելով՝ վերջինիս ներկայանալով որպես Երևան քաղաքի բնակիչ Վլադիմիր Լյովայի Սարգսյանից օրավարձով վարձակալված 800.000 ՀՀ դրամ արժողությամբ «ՌԵՆՈ» մակնիշի 34 ZU 230 h/h ավտոմեքենայի սեփականատեր, առաջարկել է նշված ավտոմեքենայի հետ՝ 100.000 ՀՀ դրամ հավելավճար վճարելու պայմանով փոխանակման եղանակով գնել Նաիրի Նորայրի Ալեքսանյանին պատկանող «ԲՄՎ» մակնիշի 35 MN 012 հաշվառման համարանիշի ավտոմեքենան, ինչին վերջինս համաձայնել է: Գրիգոր Խաչատուրի Մուրադյանը ավտոմեքենաները հետագայում հաշվառելու կեղծ խոստմամբ վերցրել է Նաիրի Նորայրի Ալեքսանյանին պատկանող «ԲՄՎ» մակնիշի 35 MN 012 հաշվառման համարանիշի 850.000 ՀՀ դրամ արժողությամբ ավտոմեքենան և 100.000 ՀՀ դրամ գումար, որի դիմաց տվել է Վլադիմիր Լյովայի Սարգսյանից օրավարձով վարձակալված 800.000 ՀՀ դրամ արժողությամբ «ՌԵՆՈ» մակնիշի 34 ZU 230 h/h ավտոմեքենան և հեռացել, ինչի արդյունքում Նաիրի Նորայրի Ալեքսանյանին պատճառվել է խոշոր չափի՝ 950.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

(…)

Բացի այդ, Գրիգոր Խաչատուրի Մուրադյանը, խարդախությամբ՝ խաբեության եղանակով, ուրիշի գույքի խոշոր չափերով հափշտակություն կատարելու դիտավորությամբ համացանցի www.list.am կայքում՝ ծանոթանալով Վլադիմիր Լյովայի Սարգսյանին պատկանող «ՌԵՆՈ» մակնիշի 34 ZU 230 h/h ավտոմեքենան օրավարձով տրամադրելու վերաբերյալ հայտարարությանը, 2021 թվականի ապրիլի 5-7-ն ընկած ժամանակահատվածում զանգահարել է վերջինիս և հանդիպել նրա հետ: Ապա՝ դիտավորությամբ իրականությունը խեղաթյուրելով, այն է՝ 5.000 ՀՀ

դրամ օրավարձով վերցնելու կեղծ պարտրվակով, վերցրել է Վլադիմիր Լյովայի Սարգսյանին պատկանող «ՌԵՆՈ» մակնիշի 34 ZU 230 հ/հ ավտոմեքենան և հափշտակելով այն՝ վերջինիս պատճառել է խոշոր չափի՝ 800.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

(…)

Բացի այդ, Գրիգոր Խաչատուրի Մուրադյանը, խարդախությամբ՝ խաբեության եղանակով, ուրիշի գույքի խոշոր չափերով հափշտակություն կատարելու դիտավորությամբ համացանցի www.list.am կայքում ծանոթանալով Գեղարքունիքի մարզի Ջովաբեր գյուղի բնակիչ Էդվարդ Աբրահամի Մարգարյանին պատկանող «Վազ 2121» մակնիշի 34 QQ 319 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վաճառքի վերաբերյալ հայտարարությանը, 2021 թվականի նոյեմբերի 1-ին՝ ժամը 21:00-ի սահմաններում Հրազդան քաղաքի Հայ Ֆիդայիներ փողոցի օղակաձև խաչմերուկում հանդիպել է նրան և դիտավորությամբ իրականությունը խեղաթյուրելով, այն է՝ ներկայանալով որպես իր կողմից օգտագործվող «Նիսսան Լաֆեստա» մակնիշի 36 ZA 892 հ/հ ավտոմեքենայի սեփականատեր, առաջարկել է նշված ավտոմեքենաներն առանց հավելավճարի փոխանակման եղանակով վաճառել, ինչին Էդվարդ Աբրահամի Մարգարյանը համաձայնել է: Գրիգոր Խաչատուրի Մուրադյանը ավտոմեքենաները մոտ օրերս հաշվառելու կեղծ խոստմամբ ապօրինի տիրանալով Էդուարդ Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող՝ «Վազ 2121» մակնիշի 34 QQ 319 հաշվառման համարանիշի ավտոմեքենային՝ հափշտակել է այն՝ վերջինիս պատճառելով խոշոր չափի՝ 1.655.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

(…)

Բացի այդ՝ Գրիգոր Խաչատուրի Մուրադյանը խարդախությամբ՝ խաբեության եղանակով, ուրիշի գույքի խոշոր չափերով հափշտակություն կատարելու դիտավորությամբ համացանցի www.list.am կայքում ծանոթանալով Ալբերտ Ներսեսի Վարլամյանին պատկանող «Ֆորդ» մակնիշի, 36 TG 899 հ/հ ավտոմեքենան օրավարձով տրամադրելու վերաբերյալ հայտարարությանը, 2021 թվականի հուլիսի 11-ին Կոտայքի մարզի Ձորաղբյուր գյուղի Ամառանոցային 2-րդ զանգված 30 թաղամաս 45 հասցեում հանդիպել է նրա հետ և դիտավորությամբ

իրականությունը խեղաթյուրելով, այն է՝ օրավարձով վերցնելու կեղծ պատրվակով, հափշտակել է Ալբերտ Ներսեսի Վարլամյանին պատկանող՝ 3000 ԱՄՆ դոլարին համարժեք 1.485.000 ՀՀ դրամ արժողությամբ «Ֆորդ» մակնիշի 36 TG 899 հ/հ ավտոմեքենան՝ վերջինիս պատճառելով խոշոր չափի՝ 1.485.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

(…)

Բացի այդ՝ Գրիգոր Խաչատուրի Մուրադյանը խարդախությամբ՝ վստահությունը չարաշահելու եղանակով, ուրիշի գույքի խոշոր չափերով հափշտակություն [կատարելու] դիտավորությամբ համացանցի www.list.am կայքում ծանոթանալով Համլետ Վարպետյանին պատկանող «Գազել» մակնիշի 36 XR 742 հ/հ ավտոմեքենան օրավարձով տրամադրելու վերաբերյալ հայտարարությանը, 2021 թվականի հուլիսի 19-ին Համլետ Վարպետյանի՝ Երևան քաղաքի Քանաքեռ ՀԷԿ թիվ 301 տան բակում վերջինիս պատկանող «Գազել» մակնիշի, 36 XR 742 հ/հ ավտոմեքենան ամիսը 160.000 դրամով վարձակալելու շուրջ շինծու բանավոր պայմանավորվածություն ձեռք բերելով և հետագայում գրավոր պայմանագիր կնքելու կեղծ խոստում տալու միջոցով Հապետ Վարպետյանին դիտավորյալ մոլորության մեջ գցելով, հափշտակել է Համլետ Վարպետյանին պատկանող 1.500.000 դրամ արժողությամբ «Գազել» մակնիշի 36 XR 742 հ/հ ավտոմեքենան՝ վերջինիս պատճառելով խոշոր չափի՝ 1.500.000 ՀՀ դրամի չափով գույքային վնաս:

(…)

Բացի այդ՝ Գրիգոր Խաչատուրի Մուրադյանը խարդախությամբ՝ խաբեության եղանակով, ուրիշի գույքի խոշոր չափերով հափշտակություն կատարելու դիտավորությամբ 2021 թվականի նոյեմբերի 4-ին Արագածոտնի մարզի Ապարան քաղաքի «Գնթունիք» սուպերմարկետի մոտ բանավոր պայմանավորվածության հիման վրա՝ 450.000 ՀՀ դրամ հավելավճար վճարելու պայմանով՝ համաձայնության է եկել Արտյոմ Աշոտի Այվազյանի հետ վերջինիս պատկանող 800.000 ՀՀ դրամ արժողությամբ «Վազ 21099» մակնիշի, 35 NQ 229 հաշվառման համարանիշի ավտոմեքենան իր կողմից վարվող «Վազ 2121» մակնիշի, 34 QQ 319 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի հետ փոխանակելու պայմանով վաճառելու վերաբերյալ: Ստանալով 450.000 ՀՀ դրամի չափով հավելավճար և «Վազ 21099»

մակնիշի, 35 XQ 229 հաշվառման համարանիշի ավտոմեքենան, Գրիգոր Խաչատուրի Մուրադյանը հափշտակել է այն՝ Արտյոմ Աշոտի Այվազյանին պատճառելով խոշոր չափի՝ 1.250.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

(…)

Բացի այդ՝ Գրիգոր Խաչատուրի Մուրադյանը խարդախությամբ՝ խաբեության եղանակով, ուրիշի գույքի խոշոր չափերով հափշտակություն կատարելու դիտավորությամբ համացանցի www.list.am կայքում ծանոթանալով Իրինա Եղիազարյանին պատկանող «Մերսեդես Բենց» մակնիշի 37 GQ 385 հ/հ ավտոմեքենան օրավարձով տրամադրելու վերաբերյալ հայտարարությանը, 2021 թվականի նոյեմբերի 9-ին Կոտայքի մարզի Քասախ գյուղում պայմանավորվածություն է ձեռք բերել վերջինիս հետ և դիտավորությամբ իրականությունը խեղաթյուրելով, այն է՝ օրավարձով ավտոմեքենան վերցնելու կեղծ պատրվակով, հափշտակել է Իրինա Եղիազարյանին պատկանող «Մերսեդես Բենց» մակնիշի 37 GQ 385 հ/հ ավտոմեքենան և ձմեռային անվադողերի գնման համար իրեն տրված 50.000 ՀՀ դրամ գումարը՝ վերջինիս պատճառելով խոշոր չափի՝ 2.050.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

(…)

Բացի այդ՝ Գրիգոր Խաչատուրի Մուրադյանը խարդախությամբ՝ խաբեության եղանակով, ուրիշի գույքի խոշոր չափերով հափշտակություն կատարելու դիտավորությամբ իրականությունը խեղաթյուրելու միջոցով Տարոն Ջավուկցյանին ներկայանալով որպես մեքենայի սեփականատիրոջ ամուսին, Իրինա Եղիազարյանին սեփականության իրավունքով պատկանող «Մերսեդես Բենց» մակնիշի 37 GQ 385 հ/հ ավտոմեքենան 2021 թվականի նոյեմբերի 30-ին՝ ժամը 16:00-ի սահմաններում, Վանաձոր-Սպիտակ ավտոճանապարհին Տարոն Ջավուկցյանի «Վազ-21093» մակնիշի 36 RA 184 հ/հ մեքենայի հետ 850.000 ՀՀ դրամի չափով հավելավճար վճարելու պայմանով փոխանակելու եղանակով վաճառել է այն Տարոն Ջավուկցյանին: Նույն օրը պայմանավորված գումարից ստանալով 400.000 ՀՀ դրամը և Տարոն Ջավուկցյանի «Վազ-21093» մակնիշի 36 RA 184 հ/հ մեքենան հեռացել է՝ պայմանավորվելով մնացած 450.000 դրամ գումարն ստանալ մեքենաների անվանափոխման օրը: 4 օր անց մեքենայի համար անհրաժեշտ

վճարումներ կատարելու պատրվակով կեղծ պատրվակով Գրիգոր Խաչատուրի Մուրադյանը ստացել է ևս 80.000 ՀՀ դրամ գումար՝ խարդախությամբ հափշտակելով այն և Տարոն Ջավուկցյանի «Վազ-21093» մակնիշի 36 RA 184 h/h մեքենան, հեռացել է՝ վերջինիս պատճառելով խոշոր չափի՝ 850.000 ՀՀ դրամի գույքային վնաս: (…)»[1]*:*

6. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի դեկտեմբերի 20-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Սույն դեպքում, մեղադրական եզրակացության բովանդակությունից և տուժողի ցուցմունքից ակնհայտ է, որ ենթադրյալ հակահրավական վերջին արարքը կատարվել է ՀՀ Լոռու մարզում: Այլ կերպ՝ և ըստ մեղադրական եզրակացության (Վանաձոր-Սպիտակ ավտոճանապարհին Տարոն Ջավուկցյանի «Վազ-21093» մակնիշի 36 RA 184 h/h մեքենայի հետ 850,000 ՀՀ դրամի չափով հավելավճար վճարելու պայմանով փոխանակելու եղանակով վաճառել է այն Տարոն Ջավուկցյանին), և՛ ըստ տուժողի ցուցմունքի ընդհանուր բովանդակության (…2021թ. դեկտեմբերի 4-ին Tellcell Wallet ծրագրի միջոցով փոխանցել եմ նրա կողմից տրամադրված 093-66-72-82 հեռախոսահամարին: Փոխանցումից հետո, ասել է ինձ, որ ամեն ինչ կարգին է և 2021թ. դեկտեմբերի 8-ին իր կինը՝ Իրինան և իր հայրը գալու են գրանցումն իրականացնելու Վանաձոր քաղաքում:…) վերջին՝ 2021թ նոյեմբերի 30-ի արարքը սկսվել և ավարտվել է ՀՀ Լոռու մարզում:*

Հետևաբար, Դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի իրավակարգավորումների համաձայն՝ սույն քրեական գործն ընդդատյա է ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին: (…)»[2]*:*

7. Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի հունվարի 13-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի համաձայն՝ շարունակվող հանցագործությունը մեկ միասնական դիտավորությամբ, միևնույն օբյեկտի դեմ ուղղված նույնական արարքներով հանցանքի կատարումն է:*

---

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 15, թերթեր 97-28:
[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 21, թերթեր 69-84:

Սույն քրեական վարույթով մեղադրյալ Գրիգոր Խաչատուրի Մուրադյանին ներկայացված մեղադրանքի վերջին արարքի նկարագրության և տուժողի ցուցմունքի համաձայն՝ այն ենթադրաբար կատարվել է մեկ միասնական դիտավորությամբ նույնական երկու արարքներով: (...) Այսինքն՝ վերջին արարքի կատարմամբ ենթադրաբար հափշտակել է ևս 80.000 ՀՀ դրամ գումար, որից հետո միայն նախաքննական մարմինն ու հսկող դատախազը համարել են, որ ավարտվել է մեղադրյալին մեղսագրվող հիշյալ ենթադրյալ հանցանքի կատարումը, քանի որ ըստ մեղադրանքի բովանդակության՝ Գրիգոր Մուրադյանը, հափշտակելով 80.000 ՀՀ դրամ գումարը և Տարոն Ջավուկցյանի «Վազ-21093» մակնիշի 36 RA 184 հ/հ մեքենան, դրանից հետո նոր միայն հեռացել է՝ Տարոն Ջավուկցյանին պատճառելով խոշոր չափի՝ 850.000 ՀՀ դրամի գույքային վնաս: Հիշյալ վերջին դրվագի շարունակվող հանցագործություն հանդիսանալու մասին է փաստում նաև նախաքննական մարմնի տված նախնական իրավական գնահատականը՝ այդ դրվագով մեղադրյալին մեղսագրվում է մեկ հանցագործության կատարում: Շարունակվող հանցագործությունը մեկ միասնական բարդ հանցագործության տեսակ է, որը ձևավորվում է նույնական այնպիսի արարքներից, որոնց միջև, որպես կանոն, առկա է հարաբերականորեն ոչ մեծ ժամանակային խզում, և որոնք ուղնձգում են միևնույն անմիջական օբյեկտի դեմ, ընդգրկված են մեկ միասնական դիտավորությամբ և հանդես են գալիս որպես մեկ ամբողջական հանցագործության առանձին օղակ: Շարունակվող հանցագործությունն ավարտված է համարվում հանցավորի դիտավորության մեջ ընդգրկված վերջին արարքը կատարելուց հետո, իսկ սույն պարագայում հանրային քրեական հետապնդման որոշմամբ, մեղադրական եզրակացությամբ պարզ չէ մեղադրյալ Գրիգոր Մուրադյանի կատարած վերջին արարքը՝ խարդախությամբ ենթադրաբար 80.000 ՀՀ դրամ գումարը հափշտակելու վայրը, որը չի կարող նույնանալ տուժողի կողմից գումարը Tellcell Wallet ծրագրի միջոցով փոխանցելու վայրի հետ, այլ պետք է պարզվեր հիշյալ գործողությունը մեղադրյալի կողմից կատարելու վայրը, որը պարզված չլինելու հանգամանքներում մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը: Սույն պարագայում քրեական վարույթով մինչդատական

վարույթն իրականացրել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժինը /հասցեն՝ քաղաք Երևան Մազմանյան 5/, հետևաբար դատարանի գնահատմամբ սույն քրեական վարույթը տարածքային առումով ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, ինչն էլ հիմք է հանդիսանում դատարանի համար իր անհամաձայնությունը հայտնել սույն քրեական վարույթի տարածքային ընդդատության հետ կապված: (…)»[3]:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

8. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/1316/01/23 քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (…) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

10.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի*

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 21, թերթեր 90-97:

նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»[4]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[5]:

11. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «*(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախաապրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

---

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[6]:

12. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Այդ չափանիշների հիմքում ընկած է ոչ թե իրավակիրառների սուբյեկտիվ հայեցողությունը, այլ քրեական վարույթի օրենքով սահմանված օբյեկտիվ հատկանիշները, որոնց առկայությունն էլ թույլ է տալիս արձանագրել տվյալ դատարանի՝ այդպիսին հանդես գալու իրավունքն այդ վարույթով: Միաժամանակ, ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն՝ «*1. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա են այն վարույթները, որոնք վերաբերում են այդ դատարանի դատական տարածքում ենթադրաբար կատարված հանցանքներին՝ անկախ քննչական ենթակայության կանոններից:*

2. Եթե վարույթը վերաբերում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության տարբեր դատարանների դատական տարածքներում ենթադրաբար կատարված երկու կամ ավելի հանցանքներին, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ենթադրաբար կատարվել է վերջին հանցանքը:

---

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

3. Եթե մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված՝ ենթադրյալ հանցանքների կատարման վայրը, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը (…)»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *« 1. Նախնական դատալսումների ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

(…)

4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատալսումներ նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:

(…)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (…)»:

14. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, հիմք ընդունելով մեղադրական եզրակացության բովանդակությունը, համաձայն որի՝ Գ.Մուրադյանը «Մերսեդես Բենց» մակնիշի ավտոմեքենան, հավելավճար վճարելու պայմանով, Տ.Ձավուկցյանի մեքենայի հետ փոխանակելու եղանակով վերջինիս է վաճառել Վանաձոր-Սպիտակ ավտոճանապարհին, ինչպես նաև տուժողի ցուցմունքն առ այն, որ «Tellcell Wallet» ծրագրի միջոցով գումարը փոխանցել է Գ.Մուրադյանի կողմից տրամադրված հեռախոսահամարին, որոշում է

կայացրել քրեական վարույթն ըստ ընդդատության Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին[7]:

- Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ Գ.Մուրադյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման բովանդակությունից պարզ չէ վերջինիս կողմից կատարված ենթադրյալ վերջին արարքի՝ խարդախությամբ ենթադրաբար 80.000 ՀՀ դրամ գումարը հափշտակելու վայրը, որը չի կարող նույնանալ տուժողի կողմից գումարը «Tellcell Wallet» ծրագրի միջոցով փոխանցելու վայրի հետ, գտել է, որ մեղադրանքը պետք է քննի այն դատարանը, որի դատական տարածքում գտնվում է մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը[8]:

15. Նախորդ կետում վկայակոչված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 9-13-րդ կետերում մեջբերված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է արձանագրել, որ Գ.Մուրադյանին ներկայացված մեղադրանքի բովանդակությունից պարզ է դառնում, որ նրան վերագրվող ենթադրյալ վերջին հանցանքն ավարտվել է մեքենայի համար անհրաժեշտ վճարումներ կատարելու կեղծ պատրվակով տուժողից ևս 80.000 ՀՀ դրամ գումար ստանալով, որի վայրը, սակայն, մինչդատական վարույթի ընթացքում չի պարզվել, հետևաբար, սույն վարույթի տարածքային ընդդատությունը որոշելիս, պետք է հիմք ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումը, համաձայն որի՝ մեղադրանքը պետք է քննի այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը: Սույն վարույթով մինչդատական վարույթն իրականացվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնում, որի նստավայրը գտնվում է Երևան քաղաքում:

16. Ինչ վերաբերում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի վկայակոչած՝ տուժող Տ.Ջավուկցյանի կողմից «Tellcell Wallet» ծրագրի միջոցով գումար փոխանցելու հանգամանքին, ապա

---

[7] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[8] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

Վճռաբեկ դատարանի քրեական պալատը կրկնում է, որ հափշտակությունն ավարտված է համարվում հանցավորի կողմից գույքն ապօրինաբար տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն ստանալու պահից:

17. Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/1316/01/23 քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, հիմնավոր է:

Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ թիվ ԵԴ1/1316/01/23 քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Գրիգոր Խաչատուրի Մուրադյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 44-255-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 17 դրվագ 255-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 254-րդ հոդվածի 1-ին մասով, 255-րդ հոդվածի 1-ին մասով և 254-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 4-րդ կետերով թիվ ԵԴ1/1316/01/23 քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ